«Սևանի ՃՇՇ» ՓԲԸ-ի սեփականության իրավունքով պատկանող գույքի աճուրդի կազմակերպման և անցկացման մասին

2026-10-21 15:09:57

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

20.10.2026թ.-ին ժամը 15:30-ին նշանակված «Սևանի ՃՇՇ» ՓԲԸ-ի սեփականության իրավունքով պատկանող գույքի աճուրդը Չի կայացել հայտ չլինելու պատճառով:
17.11.2026թ.-ին ժամը 15:30-ին «Սևանի ՃՇՇ» ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Մայիս Հայրապետյանի կողմից, Երեան քաղաքի, Արշակունյաց փողոցի, 5 շենքի, թիվ 109 դահլիճում կանցկացվի «Սևանի ՃՇՇ» ՓԲԸ-ի սեփականության իրավունքով պատկանող գույքի աճուրդը բաց դասական եղանակով չորս առանձին լոտով: Աճուրդը անցկացվելու է ՀՀ Արդարադատության նախարարի 16.02.2020թ.,թիվ 116-ն հրամանով սահմանված կարգով:
ԼՈՏ 4-րդ իրենից ներկայացնում է «Սևանի ՃՇՇ» ՓԲԸ-ի սեփականության իրավունքով պատկանող՝ՀՀ Գեղարքունիքի մարզի Չկալովկա համայնքում գնշտնվող 2 միավոր շարժական գույք՝թվով 2 տնակ միացված իրար, յուրաքանչյուրի չափսերը՝ 3X9, օգտագործված, մեկնարկային գինը՝ 858560 ՀՀ դրամ/ութհարյուրհիսունութհազարհինգհարյուրվաթսուն/: Ծանոթություն աճուրդի ներկայացված գույքերը գտնվում է պարտապանի մոտ: Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն ֆիզիկական անձի դեպքում անձնագրի պատճեն, իսկ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում դրանց պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենները, աճուրդի մասնակցության վճարի և նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթերը: Մասնակցության վճարը և նախավճարը կազմում է լոտի գնի համապատասխանաբար 1%--ը և 5%-ը: Մասնակցության վճարը չպետք է գերազանցի ՀՀ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը: Աճուրդի մասնակցության վճարը և նախավճարը պետք է մուծվի <<Արդշինբանկ>> ՓԲԸ Շ/Մ բացված «Սևանի ՃՇՇ» ՓԲԸ-ի սնանկության հ/հ 2473602556700100: Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձիք աճուրդի հայտարարությամբ սահմանված ժամկետում՝բայց ոչ ուշ, քան աճուրդի անցկացման օրվանից հինգ օր առաջ, կարող են հայտ ներկայացնել ՀՀ Սնանկության դատարանի գրասենյակ՝ ք. Երևան Ե. Օտյան 53/2: Աճուրդին կարող են ներկա գտնվել նաև աճուրդի

մասնակից չհամարվող անձիք, աճուրդին ներկա գտնվելու համար վճարում են մուտքի վճար՝ վերը նշված Հ/Հ, որի չափը չի կարող գերաղանցել նվազագույն աշխատավարձի տասնապատիկը: Աճուրդում հաղթող մասնակից է համարվում աճուրդում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Լոտն ուսումնասիրելու, ինչպես նաև աճուրդի կանոնակարգին ծանոթանալու համար ցանկացողները կարող են զանգահարել «Սևանի ՃՇԾ» ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Մայիս Հայրապետյանին, հեռ. 091-40-79-15 կամ այցելել ք.Երևան, Արշակունյաց 5շ. 416 սենյակ:

37491407915

mayis.hayrapetyan.2015@mail.ru

ք.Երևան, Արշակունյաց պող.5, 416 սենյակ